սէքի՝ զնոյնս, և գրեցին և արձակեցին։ Իսկ ի ԺԶ(*) Մայիսի Զչի առեալ դահիճք տարան Ե ի Ցունաց և Գ ի Հայոց ի պալատն արքունի, և սուպաշին ի ճանապարհին զնոյն պատուիրէր ասել, զոր ասին առ վէզիր, եւ տարեալ առ խասէքիսն եւ նոքա՝ առ պօստանճիպաշին, եւ նա առեալ տանէր դէմ յանդիման արքայի։ Եւ պօստանճիպաշին հարցանէր եւ խասէքիքն գրէին եւ դահիճքն ընդ նոսա կային, սպասէին սպանանել զնոսա։ Բայց վէզիրն յառաջագոյն անցեալ էր զմէյմար. յորժամ նոքա ի ներս մուծանէին, զդի մէյմարին կարպետով յարտաքս ընկենուին, զոր տեսեալ ահաբեկեցան թէ Սորա այս եղեւ եւ մեք ահա՛ մեռանելոց եմք անկարծիք։ Ցայնժամ չրջեալ Աստուած Հոգին զսիրտ արքային, որ կալանաւորք եւս զերեսս արքայի չկարէին տեսանել, այլ ի Զարտաղ կոչեցեալ տեղոջէ պօստանճիպաշին ասէ. Ազատեաց զձեզ արքայ, գնացէ՛ք աղօթեցէք վասն արքայի։ Եւ դարձեալ տարան ի գուբս մահապարտացն զամենեսեան։ Եւ յետ երից աւուրց այս լինելոյ, որ այգուցն Պէնտէկոստի Բչի աւուր (19 Մայիս) երեկոյին հրաման արար զամենեսեան արձակել. և լինէր մեծ ուրախութիւն ազգաց քրիստոնէից ի տեսանելն զկենդանի նահատակն և իբրև զսուրբս ողջագուրէին և դասս դասս եղեալ՝ տանէին զնոսա ի տունս իւրեանց մեծաւ ցընծութեամբ, որ կացին անդր յարգելանոցն զաւուրս ԻԹ։ Բայց յաւուր Պէնտէկոստէի Կիրակէի զչարչարեալն Կէպուլ տարան առաջի վէզիրի, որ նմա մահ հրամայեաց. իսկ զազիէսքէրն անդ գոլով՝ ասէ տալ զնա ի Թէրսխանէ, այսինքն ի քիւրէկ։

Եւ յետնոցն կալանաւորացն պատճառ Հայք ե-

(*) Դրած է սխալմամբ։ Պենտեկոստէի նախընթաց Ուրբաթը կը հանդիպի Մայիս 16-ին։ Ծ. Հ.